ՇՈՂԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
shogher.kh@gmail.com
ORCID iD: 0009-0009-7593-9788
DOI: 10.54503/978-5-8080-1587-6-456

ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ. ՆԱՄԱԿՆԵՐ ԵՎ ԾՈՑԱՏԵՏՐԵՐ

Բանալի բառեր - Ծոցատետր, ռուսական հեղափոխություն, ռուսական սոցիալիզմ, բոլշևիզմ, Հայկական հարց, ստալինյան բռնատիրություն, տարագրություն:

Ամփոփում

Ավետիք Իսահակյանի քաղաքական հայացքների պատկերն արտացոլված է նրա օրագրերում, ծոցատետրերում և նամակներում՝ որպես համոզմունքների ձևավորում և աշխարհայացքային հիմնախնդիրների ամրագրում:

Ռուսաստանի նկատմամբ բանաստեղծի վերաբերմունքը երբեք միանշանակ չի եղել: Օսմանյան կայսրության բռնաճնշումներն ստիպել են պատանի բանաստեղծին հայացքը թեքել դեպի Ռուսաստան՝ այնտեղից ակնկալելով ապահովություն և ապագայում՝ գուցե թե անկախություն:

Այս կողմնորոշումը, սակայն, չի խանգարում նրան մասնակիցը դառնալ 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ազատագրական շարժման, ինչի պատճառով հայտնվում է ցարական պահնորդական բաժնի ուշադրության կենտրոնում՝ Երևանի բանտ, աքսոր Օդեսա, ապա 1911 թ.՝ տարագրություն…

Տարիներ հետո՝ 1917 թ., նա ոգևորությամբ ողջունում է «ռուսական հրաշափառ հեղափոխության սկիզբը»՝ համոզված լինելով, որ այն վերջ կդնի հայոց մարտիրոսությանը: Սակայն Հայաստանի համար օրհասական ժամանակներում՝ 1918-1920 թթ., երբ թուրքական զորքն ու կովկասյան թաթարների հրոսակները բզկտում էին երկիրը, Իսահակյանը բուռն

զայրույթով է անդրադառնում այդ իրադարձություններում ռուսների դերին:

Հետագայում, սակայն, համոզվելով, որ խորհրդային կարգերը հիմնավորապես և երկար ժամանակով են հաստատվել Հայաստանում, նա աստիճանաբար հակվում է Խորհրդային Հայաստան վերադառնալու գաղափարին: 1936 թ. Իսահակյանը վերջնականապես ընտանիքով վերադառնում է Հայաստան:

SHOGHIK KHACHATRYAN
PhD in Philology
Institute of Literature after M. Abeghyan of the NAS RA
shogher.kh@gmail.com
ORCID iD: 0009-0009-7593-9788

ISAHAKYAN ON RUSSIA AND OF HIS TIME: LETTERS AND POCKETBOOKS

Key words: Pocketbook, Russian Revolution, Russian Socialism, Bolshevism, Armenian Cause, Stalin's dictatorship, Transmigration.

Abstract

Perhaps, the complete picture of Avetik Isahakyan's political views is reflected in his diaries and pocketbook, mostly not as a record of the facts of political activity, but as a constantly evolving process of thinking, formation of beliefs, as a fixation of worldview issues.

The attitude of the poet towards Russia has never been unambiguous. Still a teenager, he writes in his diary: "Until now, I was of the opinion that I should fight and get Turkish Armenia - as a free country... but the news of the Sassoon massacre changed me. This way the Turkish will finally wipe us off the face of the earth." Therefore, we must fight against the Turkish in favor of Russia ("at least the Russian has a law and a heart") and join it, because then there is hope that we will ever achieve independence ("of course, that one day there will be a constitution in Russia").

This orientation, however, does not prevent him from becoming a participant in the Armenian liberation movement of the late 19th and early

20th centuries, which is why he came to the attention of the tsarist security department: prison in Yerevan, exile in Odessa, then exile in 1911…

Years later, in 1917, he enthusiastically welcomed “the onset of the glorious Russian Revolution,” firmly believing that it would bring an end to the martyrdom of the Armenian people. However, during the critical period for Armenia between 1918 and 1920—when Turkish forces and Caucasian Tatar bands were ravaging the country—Isahakyan expressed profound indignation at the role played by the Russians in these events.

Later, being convinced that the Soviet order has been thoroughly and for a long time established in Armenia, he gradually leans towards the idea of returning to Soviet Armenia, tries to “find a modus to live with them.” In 1936, Isahakyan finally returns to Armenia with his family and lives and works in his Homeland until the end of his life.

ШОГИК ХАЧАТРЯН
Кандидат филологических наук
Институт литературы им. М. Абегяна НАН РА
shogher.kh@gmail.com
ORCID iD: 0009-0009-7593-9788

ИСААКЯН О РОССИИ И СВОЁМ ВРЕМЕНИ: ПИСЬМА И ЗАПИСНЫЕ КНИЖКИ

Ключевые слова: Записные книжки, русская революция, русский социализм, большевизм, Армянский вопрос, сталинская диктатура, изгнанничество.

Аннотация

Целостная картина политических взглядов Аветика Исаакяна, наиболее полно отражена, пожалуй, в его дневниках и записных книжках преимущественно не как констатация фактов политической деятельности, а как изменчиво развивающийся образ мышления, формирование убеждений, как фиксация мировоззренческих проблем.

Отношение поэта к России никогда не было однозначным. Будучи подростком, он пишет в дневнике: «До сих пор я придерживался того

мнения, что нужно воевать и обрести Тачкахайастан (Турецкая или Западная Армения) как свободную страну... но новость о резне в Сасуне изменила меня: на этом пути тачик (турок) окончательно сотрет нас с лица земли», поэтому мы должны бороться против тачика в пользу России («у русских хотя бы есть закон и сердце») и присоединиться к ней, потому что есть надежда, что в таком случае мы когда-нибудь достигнем независимости («конечно же, в России когда-нибудь будет Конституция»).

Эта ориентация, однако, не мешает ему стать участником армянского освободительного движения конца 19-го и начала 20-го веков, и оказаться в центре внимания царской охранки - ереванская тюрьма, ссылка в Одессу, затем в 1911 году - изгнание...

Спустя годы, в 1917 году, он с воодушевлением приветствовал «начало великой Русской революции», будучи убеждён, что она положит конец мученичеству армянского народа. Однако в критический для Армении период 1918–1920 годов, когда турецкие войска и банды кавказских татар разоряли страну, Исаакян с глубоким возмущением отзывался о роли русских в этих событиях.

Позже, убедившись, что советский порядок основательно и надолго утвердился в Армении, он постепенно склоняется к идее возвращения в Советскую Армению, пытается «найти modus для жизни с ними». В 1936 г. Исаакян окончательно возвращается с семьей в Армению и до конца жизни живет и творит на родине.

Ներածություն

Հուշագրական (մեմուարային) ժանրը, իբրև գեղարվեստա–փաստագրական գրականության տարատեսակ, իր արմատներով կապվում է հեռավոր անցյալին՝ մարդկային քաղաքակրթության և մշակութային արժեքների ձևավորման հնագույն շրջանին, սակայն միայն XVIII դարավերջին է այն վերջնականապես ձևավորվում իր երկու հիմնական ճյուղավորումներով՝ օրագրություն և հուշագրություն՝ ուշադրությունն ամբողջապես ուղղելով մարդու անհատական աշխարհին:

Խնդիր դնելով հիշողությունների միջոցով վերարտադրել իր ապրած կյանքը՝ մեմուարագիրը մի որոշակի նպատակ է հետապնդում՝ ցույց տալ, թե ինչպե՞ս են ձևավորվել իր պատկերացումները

աշխարհի ու մարդկանց մասին, ի՞նչ նշանակություն է ունեցել իր համար տվյալ դեպքը, իրադարձությունը, կյանքի տարբեր ժամանակահատվածներում ինչպես է ընթացել հուշագրողի ինքնաճանաչումը, հոգևոր ու մտավոր ի՞նչ զարգացում է նա ապրել: Գյոթեն հուշագրող–արվեստագետի հաջողության մի կարևոր պայման է ընդգծում. «Դա այն է, որ տվյալ անհատը կարողանա հասկանալ իրեն և իր դարաշրջանը» (Գյոթե, 198: 11):

Ահա այս մոտեցումով ենք դիտարկել իր ապրած բարդ ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական վայրիվերումների արձագանքները Իսահակյանի օրագրերում և նամակներում:

XI–XIV դարերի սոցիալ–քաղաքական փոթորիկներից հետո Հայաստանը՝ որպես պետական–քաղաքական իրողություն, դադարել էր գոյություն ունենալուց՝ մնալով լոկ իբրև աշխարհագրական հասկացություն: Հայերի ազատագրական շարժումները մինչև XIX դարն ընթանում էին Հայաստանի՝ Պարսկաստանին ենթակա հատվածում, սակայն Արևելյան Հայաստանի զգալի մասի՝ Ռուսական կայսրության մեջ ընդգրկվելուց հետո Հայոց հարցը ստանում է հիմնականում թուրքահայերի ազատագրության խնդրի կերպարանք:

Բեռլինի չարաղետ կոնգրեսը ճակատագրական եղավ հայերի համար: Աբդուլ Համիդը ճարպկորեն օգտվեց մեծ տերությունների շահերի անհամատեղելիությունից, և... «սկսվեցին զուլումի տարիները»: Էմիլ Դիլոնի վկայությամբ՝ «...հայերին մեր պաշտպանության տակ առնելով՝ մենք հանդիսավոր կերպով ջնջեցինք քավարանը և նրան կատարյալ դժոխքի վերածեցինք: Մենք պատճառ եղանք, որ թուրքերի վարչական անկանոն եղանակը վերածվի անողորմ ջնջման կանոնավոր սիստեմի» (Գեղամեանց, 1915: 480):

Հակազդեցությունը չուշացավ: Սկսվեց հայ ազատամարտի նոր փուլը. սկիզբ դրվեց կամավորական խմբերի ստեղծմանը, ձևավորվեցին ազգային կուսակցությունները:

«Ես ևս անդամ էի պատմական այս շարժման և ուրիշներու հետ ջանացի ապահովել իմ բազմաչարչար ժողովուրդիս համար ազատ մարդկային կյանք, հավատալով մեր արդար դատի վերջնական հաղթանակին» (Իսահակյան ա, 194: 10),- գրել է Ավ. Իսահակ-

յանը Երկրորդ աշխարհամարտի տարիներին:

Իսահակյանի քաղաքական հայացքների երևի թե ամենաճշգրիտ, անկեղծ և ամբողջական պատկերը արտացոլված է նրա օրագրերում, ծոցատետրերում և նամակներում՝ առավելապես ոչ թե իբրև քաղաքական գործունեության փաստերի արձանագրում, այլ մտածելակերպի հարափոփոխ զարգացող ընթացք, համոզմունքների ձևավորում, իբրև աշխարհայացքային հիմնախնդիրների ամրագրում:

Աշխարհի ու համայն մարդկության ցավով տառապող բանաստեղծը բնական է, որ նախ և առաջ մտահոգված էր հարազատ ժողովրդի ճակատագրով: «Մարդ կարող է թափառել աշխարհի ամեն կողմերը, օտար երկրներ, ուրիշ ժողովուրդների մեջ, իբրև ճանապարհորդ, ուսումնասեր և այլն, բայց հայրենիքը՝ այդ նրա տունն է, իր հայրենի պապական օջախը...

Այդ կողմից կոսմոպոլիտիզմը ֆալշ է և չոր. աշխարհը մարդու հայրենիքը չէ, այլ հեռո՛ւ տեղեր, օտար ափեր, ուր մարդ իրեն պանդուխտ է զգում, հայրենիքը միշտ քաշում է...» (Իսահակյան դ, 1977: 296-297): Առավել ևս Հայ Հայրենիքը, որը խարխափում էր գոյի և չ-գոյության սահմանագծին՝ տրոհված արևմտյան և արևելյան հատվածների, որ XIX դարից սկսյալ կոչվում էին Թուրքահայաստան և Ռուսահայաստան:

Իսահակյանի արձագանքը աշխարհաքաղաքական վայրիվերումներին

Պատանի Իսահակյանը դեռ 1894 թ. իր քաղաքական ծրագրերում որոշակի դեր ու նշանակություն էր տալիս Ռուսաստանին: «Մինչև այժմ ես այն կարծիքին էի, որ պիտի կռվել և Տաճկահայաստանը ձեռք բերել - իբրև ազատ երկիր... բայց Սասունի կոտորածի լուրը ինձ փոխեց, այս ճամփով տաճիկը մեզ կջնջե վերջնականապես աշխարհի երեսից» (Իսահակյան դ, 1977: 94): Ուստի մենք պետք է կռվենք տաճիկի դեմ՝ հօգուտ Ռուսաստանի («գոնե ռուսը օրենք և սիրտ ունի» (Իսահակյան դ, 1977: 94)) և միանանք նրան, որովհետև հույս կա, որ այդ դեպքում երբևէ կհասնենք անկախության («իհարկե, որ մի օր Ռուսաստանում կոնստիտուցիա կլինի» (Իսահակյան դ, 1977: 94)): Տարիներ հետո՝ 1917 թ., նա ոգևորությամբ ողջունում է

«ռուսական հրաշափառ հեղափոխության սկիզբը» (Իսահակյան դ, 1977: 324)՝ համոզված լինելով, որ այն վերջ կդնի հայոց մարտիրոսությանը: 1917 թ. մարտի 18-ին գրող, թարգմանիչ և հասարակական գործիչ Կարեն Միքայելյանին ուղղված նամակում Իսահակյանը գրում է. «...գլուխս ռուսական հեղաշրջման կախարդական, հրեղեն լուրերով ուղղակի պայթեց... Այս մեծ, անսահման ուրախության համար փոքր է սիրտս... կեցցե Ռուսաստանը, կեցցե ռուս մարդը...» (Իսահակյան բ, 2020: 288-289): Պարզ էր, որ նա կողմնորոշվում է դեպի Ռուսաստան: Մանավանդ վերջին երկու-երեք տարիների իրադարձություններից հետո, երբ «մեր ջարդերի պատճառով եվրոպական պետությունները թուրքի ձեռքը սեղմելու մեծ փառքը իրար ձեռքից էին խլում» (Իսահակյան դ, 1977: 325) և «Քրիստոսի խաչին թքող, վաշխառու Եվրոպան» առևտուր էր անում հայոց արյան վրա: Այդ ամենին ականատես բանաստեղծը գրում է. «Ո՞ւր է գնում եվրոպական մորալը - դեպի անկում: Բոլշևիզմյան հողմը պիտի գա մաքրե այս գարշահոտությունը...» (Իսահակյան դ, 1977: 341):

Սակայն չի կարելի նման արտահայտությունները միանշանակորեն ընդունել: Ռուսական հեղափոխության հաղթանակից և մանավանդ 1920-ական թթ. Հայաստանի խորհրդայնացումից հետո Իսահակյանի քաղաքական գրառումներում հակասական, հաճախ իրարամերժ մտքերի ու արտահայտությունների ենք հանդիպում:

Այսպես, Հայաստանի համար օրհասական ժամանակներում՝ 1918-1920 թթ., երբ հայոց հողի վերջին պատառիկի վրա մեր ժողովրդի լինել-չլինելու խնդիրն էր վճռվում, երբ թուրքական զորքն ու կովկասյան թաթարների հրոսակները բզկտում էին երկիրը և մոտենում Երևանի մատույցներին՝ երազելով բացել ճանապարհը դեպի Թավրիզ ու Բաքու և Հայաստանը սահմանափակել էջմիածնի ու Սևանի շուրջը, Իսահակյանն իր ծոցատետրում գրում է. «Ռուսների (սոցիալիստների) թուրք եղբայրները կոտորում են ի փառս ռուսական սոցիալիզմի, ռուսական տգիտության...» (Անտիպ ծոցատետրեր, 736-II: 1), «Ռուսները թուրքերից վատ են - դավաճան, երախտամոռ - հրեան միշտ (Հուդա)՝ առնող և ծախող» (Անտիպ ծոցատետրեր, 736-II: 7):

Զայրույթի այդպիսի պոռթկման անմիջական պատճառը ժա-

մանակի դիվանագիտական-քաղաքական անցուդարձերն էին:

Մոտ ապագայում Թուրքիայի խորհրդայնացումը դյուրացնելու մտադրությամբ և, իբրև հակակշիռ եվրոպական պետությունների դիվանագիտական բոյկոտի, փորձելով թուրքական սպառնալիքով ստիպել վերջիններիս ճանաչելու խորհրդային իշխանությունը՝ Խորհրդային Ռուսաստանը ամեն ինչով օժանդակում էր Թուրքիային և վճռական շատ հարցերում ճնշում գործադրում Հայաստանի վրա: Իսկ 1920 թ. օգոստոսի 24-ին Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրվել էր դաշնագրի մի նախագիծ, որից քաջալերվելով ու նաև բոլշևիկներից ստացած 500 հազար ոսկով «բանակի պակասները լրացնելով»՝ թուրքերը սեպտեմբերի 20-ին կրկին արշավեցին Հայաստան՝ հյուսիսից և արևելքից հայոց աշխարհի սահմաններին մոտեցած Կարմիր բանակի հետ երկիրը սեղմելով հրե աքցանի մեջ: Դրա հետևանքով 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի նորածին Հանրապետության դաշնակցական կառավարությունը, ստորագրելով Լեգրանի համաձայնագիրը, իշխանությունը խաղաղորեն փոխանցեց բոլշևիկներին: Այս իրադարձությունը Իսահակյանը, մեղմ ասած, խանդավառությամբ չի ընդունել: Նրա համոզմամբ՝ «Ահավոր ուժ է հայրենիքի սերը, ազգի սերը: Սոցիալիզմը, եթե չպիտի ներդաշնակվի սրա հետ, չի կարող ապրել» (Իսահակյան բ, 2020: 457): Սկզբնական շրջանում նրա վերաբերմունքը բացասական չէր՝ պայմանավորված, թերևս, նաև այն հանգամանքով, որ Հայաստանում, ինչպես և ողջ Կովկասում, կայուն դրություն էր ստեղծվել, «ռուսական ուժի ներկայությունը կսանձե թշնամու ախորժակները» (Իսահակյան բ, 2020: 362): 1921 թ. հուլիսի 1-ին Հովհաննես Թումանյանին գրած նամակում Իսահակյանը մանրամասնում է իր տեսակետը այս խնդրի շուրջ: «Ես ինքս ազգային բացարձակ անկախության ոչ կուսակից էի, ոչ հավատացող և ոչ էլ համոզված, մենք մեր ուժերով չէինք կարող անկախ լինել և պահել անկախությունը» (Իսահակյան բ, 2020: 362): Որն էր այդ դեպքում ելքը: «Քաղաքակիրթ Եվրոպայից» լիովին հիասթափված բանաստեղծը հայացքն ուղղում է դեպի Ռուսաստան. «Ըստ իս, Հայաստանը և հայ ժողովուրդը կարող է միայն ապրել Ռուսաստանի հետ, կամ բնավ չի կարող ապրել» (Իսահակյան բ, 2020: 362-363):

Սակայն վերջին շրջանում հայ ազգային ուժերի վարած քաղաքականությունը, նաև շատ ու շատ արտաքին, մեզանից անկախ հանգամանքներ որոշ սառնություն էին մտցրել հայ-ռուսական հարաբերությունների մեջ, ինչը և (Իսահակյանի բնորոշմամբ՝ «ռուսների և մեր միջև ծագած թյուրիմացությունները») պետք էր հաղթահարել ու հարթել, «հայ ժողովրդի ապագան ապահովելու համար ընդլայնել նրա երկրի սահմանները և ապա լծվել կուլտուրական աշխատանքի» (Իսահակյան բ, 2020: 363):

Մի քանի ամիս անց՝ 1921 թ. դեկտեմբերի 26-ին, նա նույն միտքը՝ «հաշտվել դրացիների հետ, մտերմանալ բոլշևիզմին», կրկնում է Արշակ Չոպանյանին ուղղված նամակում. «Հայերիս համար կոզակը ավելի իրական է, քան Վիլսոնը, Ջեյմս Բրայսը, և բոլորը... Վերջացած է ամեն ինչ, խաբված ենք ապուշի պես, պարտված ենք չարաչար, նոր ուղիներ պիտի փնտրել...» (Իսահակյան բ, 2020: 389):

Այդ նոր ուղիների պրպտումները զանազան, հաճախ հակադիր ափեր էին նետում Իսահակյանի միտքը: Պարզ էր, որ բոլշևիկ զինվորը չի կռվի Հայաստանի սահմանները մեծացնելու համար: 1923 թ. սեպտեմբերի 15-ին «Հայրենիք» ամսագրի խմբագիր Ռուբեն Դարբինյանին գրում է. «Ես կամաց-կամաց հեռանում եմ սոցիալիզմից, քանի որ սոցիալիզմը բարեգործական մի բան է, ոչ թե մետաֆիզիկա, փիլիսոփայություն, ընդգրկուն աշխարհայացք» (Իսահակյան բ, 2020: 506): Ծոցատետրերից մեկում զավեշտալի մի միջադեպ է գրառել. «Ռոբերտ Օուենը՝ իր ուտոպիայի մասին պառլամենտում առաջարկած հետաձգումի վրա բղավեց - «ի՞նչ, ամբողջ մարդկության երջանկությունը հետաձգել երկրորդ նստաշրջանի՞ն...»: Միամիտ երազ» (Անտիպ ծոցատետրեր, 785-11: 29): Նմանապես, նաիվ փիլիսոփա է համարում Մարքսին, որի քարոզած սոցիալիզմը մեծ քաղաքների արդյունք է, իսկ հայ գյուղացին իր հոգեբանությամբ երբեք սոցիալիստ չի դառնա: Մինչդեռ նույն շրջանի օրագրային գրառման մեջ կարդում ենք. «Բայց մենք ունենք ելք՝ ռուսը, ռուս պետականությունը...» (Իսահակյան դ, 1977: 358), ինչ կերպարանքով էլ որ նա ներկայանա, թեկուզ բոլշևիկյան, սոցիալիստական:

Իսահակյանի քաղաքական մտորումների այս հակասակա-

նությունը ծագում էր փոփոխական ժամանակների ներքին անկայունությունից:

Հայաստանի խորհրդայնացումով ընկել էր Հայաստանի Առաջին Հանրապետությունը, վտանգվել էր երկրի անկախությունը: Այնուհետև Խորհրդային Հայաստանը միացել էր Ռուսաստանին՝ պառակտված, առանց իր պատմական հողերի: Այնինչ, Իսահակյանին միշտ թվացել էր, թե Ռուսաստանը պետք է լիներ հայոց պատմական հողերի հավաքողը և Հայաստանի միակ ապավենը: 1931 թ. ծոցատետրում կարդում ենք. «1878 թվերին, ռուս-տաճկական պատերազմից հետո, երբ Կասը իր նահանգով հանձնվեցավ Ռուսաստանին, մտավորական հայերը սուգ են կապել այն պատճառով, թե ապագա անկախ Հայաստանից, որ Անգլիան և Եվրոպան պիտի ազատեն, մի նահանգ կորսվեցավ: Որովհետև եթե թուրքերի ձեռքի տակ մնար, մոտ ապագայում պիտի կազմեր ազատ Հայաստանի նահանգներից մեկը» (Անտիպ ծոցատետրեր, 738-11: 17): Առկա էր նաև Թուրքահայաստանի մասին Խորհրդային Ռուսաստանի կառավարության դեկրետը, որի առաջին կետով նախատեսվում էր ռուսական զորքերի դուրսբերումը Արևմտյան Հայաստանից: Դա ճանապարհ էր բացել թուրքական զորքերի համար: Հետևանքը եղավ այն, որ քեմալական հրոսակախմբերը հասան մինչև Ալեքսանդրապոլ՝ հրի մատնելով երկիրն ու կոտորելով հայ բնակչությանը: Հենց այդ ռուս-թուրքական դաշինքի պատճառով կարծես վավերագրվեց հայկական հողերի բռնազավթումը Թուրքիայի կողմից, փորձ արվեց վերջակետ դնելու Հայկական հարցին, մի բան, որի հետ Իսահակյանը երբեք չէր կարող հաշտվել:

Իսահակյանը չէր հավատում սոցիալիզմի հաղթանակին առկա պայմաններում: Նա բոլշևիկներին մեղադրում էր միամիտ ռոմանտիզմի մեջ. «Այս տհաս մարդկության մեջ իրագործել սոցիալիզմը, իր գեշ ձևով՝ կոմունիզմը, վայր ընտրելով իսլամ և մոնղոլ երկիրները... Ողորմելի, վայրենի գազաններ...» (Իսահակյան բ, 2020: 482):

Վերադարձի ոդիսականը

Հեռվից հետևելով դեպքերին ու զարգացումներին՝ բանաստեղծը ոչինչ սփոփիչ չէր կարողանում գտնել: Բացի դրանից՝ իրադրութ-

յունը բարդ էր, և մինչև օրս էլ շատ բան հստակված չէ: Հայտնի է, որ Կարսը, Արդահանը, Արդվինը զիջել էին Թուրքիային: Հայաստանի հյուսիսային շրջանները, Ախալքալաքը, Ախալցխան (Ջավախքը) միացվել էին Վրաստանին: Ղարաբաղը և Նախիջևանը, իբրև ինքնավար մարզեր, հանձնվել էին Ադրբեջանի «հովանավորությանը»: Հայաստանը փաստորեն մասնատվել էր՝ հօգուտ հարևանների: Սա ծանրակշիռ պատճառ էր Իսահակյանի նոր մտորումների համար. «Ափսոս չէր ցարիզմը: Ի՞նչ բռնեց սրա տեղը - թաթարական հեգեմոնիա Կովկասում: Երևի, մինչև որ վերջին բոլշևիկ շունը չսատկի Լենինի պես, օր չենք տեսնելու» (Իսահակյան գ, 2021: 25): Մինչդեռ Լենինի մահից հետո դրությունը վատթարացավ, երկրում սկսվեց ստալինյան բռնատիրության երկարատև շրջանը: Դրսից դիտողը, եթե ուզենար, կարող էր չնկատելու տալ ցանկացած դրական տեղաշարժ տնտեսության, մշակույթի բնագավառում և տեսնել միայն մռայլ գույները, ստվերոտ կողմերը: Իսահակյանը, սակայն, այդպես չի վարվել: Համոզվելով, որ բոլշևիկները ամուր են նստել և արմատ են ձգում, նա աստիճանաբար հակվում է դեպի Խորհրդային Հայաստան վերադառնալու գաղափարը, փորձում «modus գտնել նրանց հետ ապրելու» (Իսահակյան բ, 2020: 496): Սկսում է հետաքրքրվել հայրենիքի անցուդարձով, հնարավորին չափ տեղեկատվություն հավաքել՝ թերթերից, ընկեր-ծանոթներից, երկրից եկածներից: Աշխատում է անաչառ գնահատել իրադրությունը, լինել կուսակցական շահերից վեր, միայն համազգային: 1924 թ. հուլիսի 15-ին Վենետիկից Ռ. Դարբինյանին ուղղված նամակում Իսահակյանը գրում է. «Այստեղ է նկարիչ Սարյանը: ...Բոլշևիկ չէ: Պատմում է նրանց դրական ու բացասական կողմերն ու գործերը: Ասում է, որ եթե խաղաղություն լինի, մի քանի տարուց հետո (5-6) շատ լավ երկիր կլինի, թեև պզտիկ, բայց բարեկարգված» (Իսահակյան գ, 2021: 37): Նա նամակագրական կապ ուներ նաև Կարեն Միքայելյանի, Պողոս Մակինցյանի հետ, որոնց անհագորեն հարցուփորձ էր անում երկրում կատարվողի մասին և ուրախանում ամեն մի լավ լուրով. «Նկարագրում էր վառ գույներով Հայաստանի վերաշինումը - համալսարան, կոնսերվատորիա, թատրոն, նոր շենքեր, փողոցները ասֆալտապատ, Երևանը՝ մտավորա-

կանության կեդրոն, միշտ ժողովներ, խմբումներ, պարեր, համերգներ, ազգային սեփական կյանք, ամեն տեղ հայոց լեզու, հայոց երգ...» (Իսահակյան գ, 2021: 121): Այսքանը լսելով՝ կարելի էր «մյուս բաների վրա աչք գոցել»:

Իսահակյանը սկսում է լրջորեն մտածել հայրենիք գալու մասին:

Դեռ 1911 թ. հուլիսի 25-ին՝ սահմանն անցնելուց մեկ շաբաթ հետո, Վիկտորյա Աբովյանին գրել էր. «...թվում է, որ այս ճամփեն շա՜տ է երկար, և վերադարձը ուշ է լինելու» (Իսահակյան բ, 2020: 181): Վերադարձի մասին միտքը տարագրության երկար ու ձիգ տարիներին հանգիստ չի թողել բանաստեղծին: Օրագրերում, ծոցատետրերում և հատկապես նամակներում նա հաճախ է գրում իրենց դատի, ներման հնարավորության մասին, վերադառնալու ուղիներ ու միջոցներ որոնում:

1918 թ. հունիսին՝ Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո, Իսահակյանը «Հիշատակարան»-ում գրել է. «Որոշեցի, որ առավոտյան պատգամավորների հետ թռչենք օդանավով՝ գնամ տեսնեմ Հայաստանի գավառները... երբ առավոտյան աչքերս բացի, տեսա, ավա՜ղ, ինձ Լեմանի միշտ օտար ափերում... Հայաստանի նահատակության և աշխարհասասան պատերազմի հինգերորդ տարեգլխի նախօրյակին» (Իսահակյան դ, 1977: 334-335): Եվս 8 տարի հարկավոր եղավ այդ խնդիրը կարգավորելու և Հայաստան այցելելու համար: Խորհրդային Հայաստան վերադառնալու վճիռը հակասություններ է առաջ բերում բանաստեղծի և նրա կուսակցական ընկերների միջև. «Լսել եմ, որ մեր Դաշնակցական ընկերների մեջ խոսք է եղել, թե ես բոլշևիկ եմ: Երբե՛ք, չհավատաս: ...Ուրիշ բան է մեր կողմից պոլիտիկայով վարվելը...» (Իսահակյան բ, 2020: 459): Դաշնակցական մամուլում այդ փաստին արդեն անդրադարձ եղել է: 1957 և 1958 թթ. «Հայրենիք» ամսագրում շարունակաբար հրատարակվեցին 1922-1926 թթ. Ռուբեն (Արտաշես) Դարբինյանին ուղղված Ավ. Իսահակյանի նամակները՝ Ռ. Դարբինյանի առաջաբանով և ավարտին՝ նաև ընդարձակ հոդվածով՝ «Ավետիք Իսահակյանը և խորհրդային իշխանությունը» («Հայրենիք», Բոստոն, 1957, թիվ 12, 1958, թիվ 1, 2):

Մեկ տարի անց՝ 1959 թ., Կահիրեի «Հուսաբեր»-ում «Ի՞նչ են ասում Ավետիք Իսահակյանի նամակները» վերտառությամբ իր դիտողություններն ու մեկնաբանություններն է հրատարակել Վարդգես Ահարոնյանը («Յուսաբեր», Կահիրէ, 1959, 7 յունուարի):

Երկուսի եզրակացությունն էլ նույնն է. Իսահակյանը Խորհրդային Հայաստան է վերադարձել գլխավորապես արտասահմանում ունեցած նյութական նեղությունների պատճառով: Տարաձայնությունները Դաշնակցության հետ բացատրվում են բոլշևիկներին սիրաշահելու պարտադրանքով:

Դժվար է համաձայնել այս տեսակետին, որովհետև Իսահակյանն ինքը 1920 թ. ծոցատետրում գրում է. «Երբ մեկը ծախում է իր գաղափարը փողի համար կամ փողի համար փոխում է իր կուսակցությունը, այն ժամանակ - «բոզը գտանք...» (Անտիպ ծոցատետրեր, 785-11: 22):

Իրականում կուսակցության հետ նա տարաձայնություններ ունեցել է նաև նախորդող տարիներին: Ձեռնպահ մնալով մեկնաբանություններից՝ պարզապես ներկայացնենք այն, ինչ գրել է Իսահակյանը տվյալ խնդրի առնչությամբ: «Հիշատակարան»-ում այս հարցը չի շոշափվում՝ արծարծվելով հիմնականում նամակներում և ծոցատետրերում: 1912 թ. Հովհաննես Թումանյանին Կ. Պոլսից գրել է. «Այստեղ բոլորովին մենակ եմ և ընկերներ չունեմ, դաշնակցական խմբակից հեռացած եմ և համարյա բոլոր կապերս խզել եմ. մնում է, որ հրապարակավ հայտնեմ և փեշերս թափ տամ դաշնակցական կոչված սրիկաներից» (Իսահակյան բ, 2020: 203): Մոտ երկու տասնամյակ անց մի ծոցատետրում նա հաստատել է այդ փաստը. «Աշխարհի մեջ առաջին անգամն է պատահել, որ ռուսահայը կարողացավ թրքահայի փողը ուտել. Ահարոնյան, Խատիսյան կերան, ուտում են Գյուլբեկյանի, Խորասանյանի փողերը:

- Ես գիտակցություն և քաջություն ունեցա թքելու Դաշնակցության վրա և հեռանալու: Թքելու եմ և ընկերներիս տխմար և հանցավոր գործունեության վրա: Ես թքել եմ Դաշնակցության վրա 1912 թվից» (Անտիպ ծոցատետրեր, 738-11: 15):

Հայաստանի մռայլ ներկան և անորոշ ապագան մեղավոր

գտնելու տրամադրություններ էին ծնում: Եվ ամենաակտիվ գործող ուժը՝ Դաշնակցությունը, բնականաբար, առաջինն էր հարվածի թիրախ դառնում. «Դաշնակցականները ճառում են - այս արեցինք, այն արեցինք, այս կռիվը, այս քաջությունը: Ինչ արիք, ինչ չարիք, չգիտեմ, բայց կանխիկ բանն այն է, որ հիմա Հայաստանում մի հայ չկա» (Անտիպ ծոցատետրեր, 773-11: 28): 1916 թ. օգոստոսի 12-ին, Կ. Միքայելյանին հայտնելով Մ. Վարանդյանի, Ա. Ահարոնյանի և հետևապես Դաշնակցության կեսի հետ իր հակառակության՝ «միմյանց սպանելու չափ թշնամի» լինելու մասին, Իսահակյանը գրում է. «Եթե չլինեին այն մի քանի ընկերները, որոնց հետ գործել եմ և ոգևորվել, և այն կռվող տղերքը, որոնց շատ եմ սիրում, վաղուց էի հեռացել այս կուսակցությունից, զգացումներս, մտածողություններս շա՜տ են տարբերվել դրանից... Եվ վերջապես սրանից հետո՝ այս բնաջնջումից հետո, էլ ի՞նչ Դաշնակցություն, էլ ի՞նչ բան, նոր ուղի է պետք, եղածները բոլորը անպետքացան, ո՞վ կարող է նոր ուղի գտնել» (Իսահակյան բ, 2020: 276): Հենց այդ նոր ուղու որոնումները նրան բերեցին բոլշևիկյան Հայաստան, ուր կարծես հնարավոր էր դարձել «նորից ապրել, վերաշինել, ստեղծել»: Իսկ «Դաշնակցությունը առաջ, երբ թյուրքահայությունը կար, ինքն իրեն խաբում էր Հայաստան ստեղծելու, ազատելու հույսով, իսկ հիմա, երբ ջնջված է երկիրը, ուրիշներին է խաբում՝ լոկ իրեն շեֆերի հացը ապահովելու համար» (Անտիպ ծոցատետրեր, 738-II: 2):

Այդ շեֆերից մեկի՝ Սիմոն Վրացյանի մասին Իսահակյանը անբացատրելի զայրույթով ու արհամարհանքով է արտահայտվել. «Ս. Վրացյանը մատնել է ճեմարանի ընկերներին:

Դերսիմցի Աշոտին (նա, որ հետո Միհրանի դեմ անհաջող տեռոր կատարեց), Հայկ Աստվածատրյանին ու մի ուրիշի: Մատնել է որպես ազատ, անբարո գաղափարների տեր տղաների: Եվ Կարապետ եպիսկոպոսը՝ տեսուչը, վռնդել է նրանց:

Սերյոժա Գրուզինսկի: Հայրը, գրադարանի ծառայող, գողացել է մագաղաթ գրքերը և Մոսկվա ծախել:

Ինքը ճեմարանում լրտես:

Լեռնահայաստանում վարչապետ, պետական գանձը կողոպ-

տող: Լեռնահայաստանում պատճառ եղավ 20000 հայերի սպանման» (Անտիպ ծոցատետրեր, 738-11: 7-8):

Իսկ Հայաստան կատարած առաջին այցից հետո՝ 1931 թ., Նիցցայում նա գրել է. «Նիցցայի դաշնակցականները մատնություններ են անում «ՀՕԿ» անդամների մասին, կառավարությանը ցույց տալով նրանց որպես համայնավարներ... Դաշնակցականները դառել են եկեղեցու պաշտպաններ, երեցփոխներ, տիրացուներ - միմիայն մի նպատակի համար՝ հացի» (Անտիպ ծոցատետրեր, 738-11: 10):

Դժվար է ասել, թե ինչով է հիմնավորել Իսահակյանը այս մեղադրանքները, և ինչն է պատճառը նման պոռթկման: Գուցե իսկապես նա, ինչպես պնդում էր Ռ. Դարբինյանը, «բոլշևիկների որոշ պաշտոնական հանձնարարականնե՞րն» էր կատարում («Հայրենիք», Բոստոն, 1958, թիվ 2)... Ավելի վաղ հենց ինքը Դ. Դարբինյանին անկեղծորեն գրել է. «Եթե բացարձակ թշնամի լինեմ նրանց դեմ, ո՞ւր գնամ, մենակ չոր գլուխ չեմ, երեք հոգի ենք... Հույս ունիմ, որ ներողամիտ կլինես ինձ՝ բոլշևիկների դեմ վախով շարժվելուս» (Իսահակյան բ, 2020: 488-489):

Այս ամենը որևէ հիմք չեն տալիս ասելու, թե Իսահակյանը իրապես թշնամացել էր Դաշնակցության հետ և խանդավառությամբ փարել բոլշևիզմին: Նմանատիպ, անգամ ավելի խիստ արտահայտություններ է նա ուղղել նաև բոլշևիկներին: Պարզապես հասկացել էր, որ խորհրդային կարգը հիմնավորապես և երկար ժամանակով էր հաստատվել Հայաստանում, ուստի «պետք է գիտնալ այս և մեր ազգային շահերը հարմարեցնել դրան» (Իսահակյան գ, 2021: 37):

Մեր խնդիրը չէ Իսահակյանի այս իրարամերժ կարծիքների քննությունը պատմաքաղաքական դրվածքով: Նկատենք միայն, որ նա ամեն բանից առաջ բանաստեղծ էր, նրա կարծիքները ոչ այնքան համակարգված քաղաքական համոզմունքների արդյունք են, որքան զգացմունքային արձագանքը այս կամ այն իրադարձությունների՝ թելադրված պահի տրամադրությամբ...

Օգտվելով Խորհրդային Հայաստանի կառավարության բազմիցս կրկնած առաջարկներից՝ Ավետիք Իսահակյանը 1926 թ. աշնանը մեկնում է հայրենիք: «Իսկապե՜ս շատ հետաքրքրական է աչքով

տեսնել Հայաստանը, խոսել պատահողի հետ, լինել գյուղերը, տեսնել, լսել... Խորհրդային Հայաստանի կառավարությունը ինձ ամեն դյուրություններ պիտի տա երկիրը թափառելու... Որքա՜ն նյութ պիտի հավաքեմ և ինչքա՜ն պիտի թարմանամ» (Իսահակյան գ, 2021: 164):

Հայրենիքը ձգում ու կանչում էր բանաստեղծին, մանավանդ տարիքն առնելուց հետո, երբ նա հաստատապես համոզվում է. «Իմ տեղը Արագածի լանջերի վրա է, ինձ ծնող ու ինձ հասկացող ժողովրդի մոտ...» (Իսահակյան գ, 2021: 100): Մինչ այդ հազար ու մի իրար հակասող բաներ էր լսել ու չէր հավատացել: Որոշել էր լինել Թովմաս առաքյալը՝ տեսնել, շոշափել, նոր հավատալ ու կարծիք կազմել: «Եթե հնարավոր եղավ ինձ համար մնալ հայրենիքում և գործել, ապա ընտանիքով կվերադառնամ: Իսկ եթե՝ ոչ - սարսափելի է, անշուշտ, ստիպված պիտի լինեմ նորից Եվրոպա ապրել՝ այսպես ջարդված, նկուն, կիսատ, հաշմանդամ» (Իսահակյան գ, 2021: 164):

1926 թ. մինչև 1930 թ. Իսահակյանը ապրել է Հայաստանում, ծանոթացել մոխիրներից կրկին հառնած ժողովրդի կյանքին և որոշել ընդմիշտ հաստատվել հայրենիքում: Այս մասին որոշ մանրամասներ ենք գտնում 1936 թ. սեպտեմբերի 7-ից նոյեմբերի 26-ը հայագետ Հայկ Պերպերյանին գրած նամակներում. «Համոզված եղիր՝ ինչ որ անեմ Հայաստանում, արած կը լինեմ արիությամբ, բարոյականությամբ, խղճմտանքով, միմիայն Հայրենիքի գերագույն շահերի համար» (Իսահակյան գ, 2021: 380):

1936 թ. Իսահակյանը վերջնականապես ընտանիքով վերադառնում է Հայաստան և մինչև կյանքի վերջը ապրում ու ստեղծագործում իր ժողովրդի մեջ, ժողովրդի համար:

Բայց անցնող տարիներն անգամ չկարողացան մոռացնել երբեմնի սարսափները: «Գիշերը երազիս մեջ տեսա հայր Ղ. Ալիշանին. պատմում էի նրան Հայաստանի մասին: Նա ասաց.

- Մի՛ ասեր, մի՛ ասեր, մի՛ ասեր...

Չուզեցավ լսել Հայաստանի ավերների մասին» (Իսահակյան դ, 1977: 393):

Չէր հանդարտվում նաև կորուստների ցավն ու մորմոքը. «Չիչերինը Հայկ. Սովետին հեռագրել է սովետացման IV տարեդարձին.

«Ողջույն հայ մեծ ժողովրդին»:

Մեծ ժողովուրդ պստիկ հայրենիքով…» (Անտիպ ծոցատետրեր, 737-11: 52):

Եզրակացություն

Այսպիսով՝ Ավետիք Իսահակյանի աշխարհայացքային որոնումներն ու քաղաքական մտորումները, ինչպես նաև նրա վերաբերմունքը Ռուսաստանի և ժամանակի աշխարհաքաղաքական իրադարձությունների հանդեպ չեն կարող մեկնաբանվել միակողմանի ու պարզունակ ձևով: Նրա նամակները, ծոցատետրերն ու օրագրային գրառումները բացահայտում են մտածողի ներաշխարհը, որում միահյուսված են հույսն ու հիասթափությունը, հավատն ու կասկածը, ազգային պարտքի գիտակցումն ու համամարդկային ցավի ընկալումը: Իսահակյանը, լինելով իր ժողովրդի ճակատագրով տառապող բանաստեղծ, փորձել է համադրել ազգային իղձերը համաշխարհային քաղաքակրթական հոսքերի հետ՝ որոնելով արդարություն ոչ միայն հայի, այլև մարդու համար ընդհանրապես:

Ռուսաստանի հանդեպ նրա վերաբերմունքը տարաբնույթ է՝ սկսած հույսից, որ ռուսական պետությունը կդառնա հայության փրկության և վերածննդի երաշխավորը, մինչև խորը հիասթափություն՝ պայմանավորված պատմական իրողություններով ու «քաղաքական դավաճանությամբ»: Այդ հակասական զգացումները փոփոխականության հետևանք չեն, այլ մտածողի ներքին ազնվության:

Ի վերջո, Իսահակյանի ուղին վկայում է ոչ թե գաղափարական դիրքորոշումների փոփոխության, այլ ազգային ինքնագիտակցության հասունացման մասին: Նրա վերադարձը Խորհրդային Հայաստան չպետք է դիտվի որպես հարմարվողականության կամ նյութական դրդապատճառների հետևանք, այլ որպես ստեղծագործ մտքի և հոգու մղում դեպի հայրենի հողը, որի հետ բանաստեղծը երբեք չի խզել ներքին կապը: Այդ վերադարձը խորհրդանշում է հայ մտավորականի հավատի վերականգնումը սեփական ժողովրդի ապագայի հանդեպ:

Այսպիսով՝ Իսահակյանի գրառումները մեզ են փոխանցում նրա մտածողության էվոլյուցիան՝ հիմնված պատմական իրադարձությունների սթափ ընկալման և բարոյական պատասխանատվութ-

յան վրա: Նրա նամակներն ու ծոցատետրերը պարզապես անցյալի վավերագրեր չեն, այլ հայոց մտավոր ժառանգության կարևոր մաս, որոնցում խտացված է ժողովրդի ցավը, հույսը և վերապրումի կամքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Անտիպ ծոցատետրեր,** ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆոնդ 736-II
2. **Անտիպ ծոցատետրեր,** ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆոնդ 737-II
3. **Անտիպ ծոցատետրեր,** ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆոնդ 738-II
4. **Անտիպ ծոցատետրեր,** ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆոնդ 773-II
5. **Անտիպ ծոցատետրեր,** ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆոնդ 785-II
2. **Ահարոնեան Վ.,** «Ի՞նչ են ասում Աւետիք Իսահակեանի նամակնե-ը», «Յուսաբեր», Կահիրէ, 1959 թ., 7 յունուարի:
3. **Գյոթե**, Իմ կյանքից, բանաստեղծություն և ճշմարտություն, Երևան, 1985, 832 էջ:
4. **Դարբինյան Ռ.,** «Առաջաբան», «Հայրենիք», Բոստոն, 1957, թիվ 12:
5. **Դարբինյան Ռ.,** «Ավետիք Իսահակյանը և խորհրդային իշխանութ-յունը», «Հայրենիք», Բոստոն, 1958, թիվ 12:
6. **Եղիշէ քահ. Գեղամեանց,** Հայերի,ազատագրական շարժումները ԺԹ դարում կամ Հայկական հարցի վեցերորդ շրջանը, Բաքու, 1915, 485 էջ:
7. **Իսահակյան Ավ.**, Արկածախնդիրները, Նյու Յորք, 1943, 17 էջ:
8. **Իսահակյան Ավ.,** ԵԼԺ, հտ. 13, Երևան, 2020, 720 էջ:
9. **Իսահակյան Ավ.,** ԵԼԺ, հտ. 14, Երևան, 2021, 1136 էջ:
10. **Իսահակյան Ավ.,** Հիշատակարան, Երևան, 1977 թ., 472 էջ:

REFERENCES

1. **Antip tsotsatetrer** (Unpublished Notebooks), GAT ′, Av. Isahakyani fond 736-II.
2. **Antip tsotsatetrer** (Unpublished Notebooks), GAT ′, Av. Isahakyani fond 737-II.
3. **Antip tsotsatetrer** (Unpublished Notebooks), GAT ′, Av. Isahakyani fond 738-II.
4. **Antip tsotsatetrer** (Unpublished Notebooks), GAT ′, Av. Isahakyani fond 773-II.
5. **Antip tsotsatetrer** (Unpublished Notebooks), GAT ′, Av. Isahakyani fond 785-II.

6. **Aharonyan V.,** Inch en asum Avetik ′ Isahakyani namaknerě (What Do Avetik Isahakyan's Letters Say), «Husaber», Kahire, 1959, 7 hunvari.
7. **Goethe,** Im kyanqic: banasteghtcutyun ev tscmartutyun (From My Life: Poetry and Truth), Yerevan, 1985, 832 p.
8. **Darbinyan R.,** Arajaban (Preface), «Hayreniq», Boston, 1957, tiv 12.
9. **Darbinyan R.,** Avetik Isahakyaně ev khorhrdayin ishkhanutyuně (Avetik Isahakyan and the Soviet Government), «Hayreniq», Boston, 1958, tiv 1, 2.
11. **Eghishe qahana Geghamyanc**, Hayeri azatagrakan shargumnerě (The Armenian Liberation Movements), Baku, 1915, 485 p.
12. **Isahakyan Av.**, Arkatcakhndirnerě (The Adventurers), New York, 1943, 17 p.
13. **Isahakyan Av.**, ELZh, ht. 13 (Complete Works, Vol. 13), Yerevan, 2020, 720 p.
14. **Isahakyan Av.**, ELZh, ht. 14 (Complete Works, Vol. 14), Yerevan, 2021, 1136 p.
15. **Isahakyan Av.**, Hishatakaran (Memoir), Yerevan, 1977, 472 p.